



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶԻ
ՊԵՏՐՈՎԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶԻ ՊԵՏՐՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔ


Հեռ.094 20-52-61

Թիվ Հ/00-96


27.12.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶՊԵՏ ՊՐ-Ն
Ա.ՆԱԼԲԱՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 29.11.2016թ. թիվ 101/107.31/5626-15 գրության Ձեզ
ենք ներկայացնում Պետրովկա համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը
EXCEL WORLD, Ավագանու թիվ-19 և 20 որոշումները:

Պետրովկա համայնքի ղեկավար  Հ.Գրիգորյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԵՏՐՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Պետրովկա համայնք, գ. Պետրովկա
հեռ. 094-20-52-61

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» Դեկտեմբեր 2016 թվականի N 19 -Ա

ՊԵՏՐՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝ Պետրովկա համայնքի ավագանին որոշում է.


1. Ստեղծել Պետրովկա համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

- | | |
|---|--|
| 1. Պողոյան Սեմյոն համայնքի ղեկավարի տեղակալ | աշխատակազմի քարտուղար, խորհրդի նախագահ, |
| 2. Հայկուհի Սուքիասյան | աշխատակազմի համայնքային ծառայող, խորհրդի քարտուղար |
| 3. Պողոյան Զավեն | ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ) |
| 4. Արթուր Արզումանյան | ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ) |
| 5. Ռուբիկ Սուքիասյան | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ) |
| 6. Դիաննա Գրիգորյան | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ) |
| 7. Աբրամ Բոզոյան | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ) |
| 8. Շիրակ Սուքիասյան | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ) |
| 9. Գյուլնարա Աղայան | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ) |
| 10. Կամո Խաչատրյան | համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ) |

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 17-ի «Պետրովկա համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին » 18-Ա որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ	<i>Արմ</i>		
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՀԱՐ	<i>Գրիգ</i>		
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ	<i>Պետր</i>		
ՊՈՂՈՅԱՆ ԶԱՎԵՆ	<i>Պողոյ</i>		
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ	<i>Վահ</i>		

Պետրովկա համայնքի ղեկավար *Վահ* Հ.Գրիգորյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒԻ
ՄԱՐԶԻ ՊԵՏՐՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶԻ ՊԵՏՐՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔ
ՀԵՌ.094 20-52-61

ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2016 թվականի N 20-Ն
ՊԵՏՐՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021թթ. ՀՆԳԱՄՅԱ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով՝

Պետրովկա համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Պետրովկա համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ	<i>Այո</i>		
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՀԱՐ	<i>Կայ</i>		
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ	<i>Կայ</i>		
ՊՈՂՈՅԱՆ ԶԱՎԵՆ	<i>Քչայ</i>		
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ	<i>ԲԲայ</i>		

Պետրովկա համայնքի ղեկավար *ԲԲ* Հ. Գրիգորյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՊԵՏՐՈՎԿԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հաստատվել է՝ համայնքի ավագանու թիվ 19-ին որոշմամբ

23.12.2016 նիստի անսաթիվը

ՊԵՏՐՈՎԿԱ 2017թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	6
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 7	
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	8
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	11
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	12
3.1. Համայնքի զարգացման տեսլական	12
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	12
4. ՀԶՄ ֆինանսավորում	18
5. ՀԶՄ մոնիթորինգ	Error! Bookmark not defined.

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Պետրովկա համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պետրովկա համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի շրջանակներում նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական պրոբլեմներն են՝ Համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ: Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից,

գ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Համայնքի իրավիճակի նկարագրություն

1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Պետրովկա համայնքը գտնվում է մարզկենտրոնից 60 կմ դեպի հյուսիս-արևելք: Համայնքի տարածքը կազմում է 465 հա: Համայնքն ունի աշխարհագրական ոչ այնքան բարենպաստ դիրք, ծովի մակարդակից բարձր է 1530մ, չկան անտառածածկ տարածքներ, ո: Պետրովկայի օդը կազդուրիչ է ու առողջարար, բուսականությունը՝ լեռնային: Համայնքի մոտով հոսում է Նորաշեն գետը: Համայնքի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում: Ձմեռը ցուրտ է, կայուն և երկարատև ձյանածածկույթն սկսվում է նոյեմբերի վերջից և վերջանում ապրիլի 2-րդ տասնօրյակում: Գարունը երկարատև է ու ցուրտ: Յրտահարությունները միջին տվյալներով վերջանում են մայիսի 2-րդ կեսից: Ամառը կարճ է, զով ու չոր: Աշունը սառն է, առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած ու տաք եղանակը, երկրորդ կեսը փոփոխական է: Աշնանային ցրտահարություններն սկսվում են սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին: Հաճախ են լինում երաշտի տարիներ, որից տուժում են գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացիները: Խորհրդային տարիներին գյուղացիներն զբաղվում էին անասնաբուծությամբ, դաշտավարությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքն ունի միջնակարգ դպրոց, բուժ- ամբուլատորիա, ակումբ:

Համայնքի շրջակայքը հարուստ է կավով, ավազով և սևահողային արգավանդ դաշտերով:

Համայնքի հողատարածքը

	<i>ՀՀ Լոռու մարզի Պետրովկա համայնքի հիմնական հողային ռեսուսները</i>	հա
1.	<i>Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը որից՝</i>	464
2.	<i>Բնակավայրի հողեր</i>	22.16
3.	<i>Գյուղատնտեսական նշանակության հողեր</i>	391.71
4.	<i>Անտառային հողեր</i>	41.36
5.	<i>Արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական հշանակության հողեր</i>	4.01
6.	<i>Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր</i>	0.36
7.	<i>Հատուկ պահպանվող տարածքների հողեր</i>	0.52
8.	<i>Ջրային հողեր</i>	

Համայնքի բնակչության առկա թիվը՝

այդ թվում՝

0-1 տարեկան – 3

1-6 տարեկան-24

6-17 տարեկան-30

17-25 տարեկան – 20

25-42 տարեկան- 75

42-62 տարեկան- 112

63 և ավելի –22

Բնակչության սոցիալական կազմը՝

այդ թվում՝

թոշակառուներ –27

միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներ – 6

հայրենական պատերազմի մասնակիցներ- 3

հաշմանդամներ – 3

որից՝

0-5 տարեկան – 1

6-17 տարեկան -2

աշխատանք ունեցողներ – 23

գործազուրկներ – 30

ընտանիքների (ծխերի) թիվը-55

փախստականներ-1

1.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 5870.0 մլն դրամ:
- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	10հա	10տ
կաղամբ	0.5հա	1.6տ
բանջարեղեն	1.3հա	1.2տ
միս		25տ
բուրդ		1տ
ծու		25հազ.հատ
մեղր		0.2տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	208
Այդ թվում կովեր	116
Մանր եղջերավոր անասուններ	116
Այդ թվում մայրեր	92
խոզեր	10
Այդ թվում մայրեր	-
թռչուններ	317
Այդ թվում հավեր	233
մեղվաընտանիքներ	8

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 26 աշակերտ:

Դպրոցն ունի 15 աշխատող:

- Համայնքում գործում է մեկ բուժ-ամբուլատորիա:

Բուժ-ամբուլատորիայում աշխատում են 1 աշխատողներ:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 10 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 30 %:

1.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

- Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսված են հանրապետական ու մարզային առարկայական օլիմպիադաներ և ռազմա-մարզական խաղեր, որոնց մասնակցում են նաև Պետրովկա համայնքի լավագույն աշակերտները:
- Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվում է լուծել հասարակական տրանսպորտի խնդիրը: Նախատեսված են միջհամայնքային համագործակցության նպատակային միջոցառումներ՝ սպորտային մրցումներ և վիկտորիաներ;
- Վորլդվիժեն միջազգային կազմակերպության համագործակցության շրջանակներում նախատեսված է հովանավորչական և կրթական ծրագրեր, ինչպես նաև Ամանորյա, երեխաների պաշտպանության օրվա միջոցառումներ, տիկնիկային բեմականացման ցուցադրություններ, ցուցահանդես-վաճառքներ, երեխաների հանգստի կազմակերպում ճամբարներում:
- ՇԵՆ բարեգործական ՀԿ-ի կողմից առաջիկա տարիների համար նախատեսված է համայնքում իրականացնել գրանտային ծրագրեր:

Պետության կողմից իրականացվող միջոցառումները խթանում են համայնքի երեխաների կրթության զարգացմանը:

Միջհամայնքային ծրագրով Պետրովկա, Նորաշեն, Սարչապետ և Արծնի համայնքների բնակիչների համար հասանելի կդառնա հասարակական տրանսպորտը: Գյուղացիների համար դյուրին կդառնա բուժ-սպասարկման հաստատություններին, սպառման շուկաներին և գլխավոր մայրուղուն հասնելը: Այն կնպաստի գյուղացիների ապրելակերպի բարելավմանը և առողջության պահպանմանը:

Միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի պարագայում կմեծանա երեխաների ակտիվությունը, ճանաչողությունը և ապագայում նրանց մասնակցությունը համայնքային խնդիրների լուծմանը:

ՇԵՆ բարեգործական ՀԿ-ի կողմից գրանտային ծրագրեր իրականացնելով՝ համայնքաբնակների աղքատության տոկոսը կնվազի:

1.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	5870.6 մլն	5870,6 մլն	5870,6 մլն	5870,6 մլն	5870,6 մլն
Ա	Հարկային եկամուտներ					
1	Հողի հարկ	1301.5 մլն	1301,5 մլն	1301,5 մլն	1301,5 մլն	1301,5 մլն
2	Գույքահարկ	706.4 հազ	706,4 հազ	706,4 հազ	706,4 հազ	706,4 հազ
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր					
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	91 հազ	116 հազ	116 հազ	116 հազ	116 հազ
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	3,5 մլն	3,5 մլն	3,5 մլն	3,5 մլն	3,5 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնություններից					

Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					
---	------------------------	--	--	--	--	--

1.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Պետրովկա համայնքի առջև ծառայած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 30%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,
- .բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,
- .ֆինանսի բացակայությունը
- .Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝

- .Ֆինանսական սղությունը,

2) Նախադպրոցական կրթության կազմակերպման խոչընդոտներն են ծնողական ներդրումների դժվարությունները:

3) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

- .մշակութային կյանքի պասիվությունը,.

4) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

- .գործազրկությունը,
- .ծայրամասային թաղամասերի գազաֆիկացման բացակայությունը
- .,խմելու ջրի անորակությունը/մանրէագերծման, ֆիլտրման բացակայությունը/,
- .խմելու ջրի անհավասարաչափ բաշխումը,

5) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

- .սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

6) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ .համայնքաբնակների աղքատությունը,

7) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

- .ջրմուղ-կոյուղուբացակայությունը,
- .խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,

.միջոցների սղությունը,

.փողոցային լուսավորության բացակայությունը:

8) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

.միջհամայնքային, ներհամայնքային և դաշտախցյան ճանապարհների քայքայված վիճակը,

.հանրային տրանսպորտի անբավարար վիճակը,

.կանգառների բացակայությունը,

.ճանապարհային նշանների բացակայությունը

9) Պետության պաշտպանության իրականացման աջակցմանը խոչընդոտող գործոններն են՝

.նախիջևանի սահմանին մոտ լինելը,

.թշնամու հարձակման վտանգը,

10) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,

.սեյսմիկ գոտում գտնվելը,

.աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,

.համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

11) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.հողաբաժնի պակասը,

.որակյալ սերմի բացակայությունը,

.սպառման շուկայի դժվար հասանելիությունը:

12) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների բացակայությունը,

.աղբահեռացում չկազմակերպելը,

13) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Պետրովկա համայնքում՝ զբոսաշրջության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից,

.գովազդի բացակայությունը,

.տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը,

14) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

15) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

16) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններ իստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

.բնակչության իրազեկվածության պակասը, բուժ-գործիքների պակասը, նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը, անվճար բուժ սպասարկման քիչ լինելը, ջեռուցման բացակայությունը

17) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

18) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝

.հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,

.ինտերնետ կապի անորակությունը,

.տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,

19) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստ իհիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից,

գ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռքբերելու,

դ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

ե/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

զ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

է/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ վտանգ կա, որ կեղտաջրերը կարող են խառնվել խմելու ջրին,

գ/ ջուրը հավասարաչափ չի բաշխված, ուստի բնակչության մի մասը հաճախ զրկվում են ջրից,

դ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

1.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

<i>Համայնքի ուժեղ կողմեր</i>	<i>Համայնքի թույլ կողմեր</i>
.Բանիմաց աշխատուժի առկայություն .Միջնակարգ դպրոցի առկայություն. Բուժ-ամբուլատորիայի առկայություն .Բերրի հողերի առկայություն .Հեռահաղորդակցության առկայություն .Ողղակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն Անասնապահությունը	Գազաֆիկացման բացակայությունը .Հողաբաժնի քանակի քչություն .Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ .Ֆինանսական ռեսուրսների բացակայություն .Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ .Թերզբաղվածության բարձր մակարդակ .Տրանսպորտային ցանցի բացակայություն .Աշխատատեղերի պակաս
<i>Հնարավորություններ</i>	<i>Սպառնալիքներ</i>
	.Գյուղ. մթերքների գների նվազում .Գյուղատնտեսական մթերքների արտահանման

<p>.Խմելու ջրի պաշարի առկայություն</p> <p>.Պետական և միջազգային ծրագրերի մեջ ընդգրկվածություն</p> <p>.Բերրի հողերի առկայություն</p> <p>.Քարի հանքերի առկայություն</p>	<p>դժվարություն</p> <p>.Սպառման շուկաների դժվար հասանելիություն</p> <p>.Տրանսպորտային հանգույցների դժվար հասանելիություն</p> <p>.Խիստ կլիմա /ցրտահարություն/</p> <p>.Արտագաղթ. Հիվանդությունների առաջացման վտանգ</p>
---	--

2. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

2.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-ինարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 3%-ով աճի:

2.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- 1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
- 2) Համայնքի գույքը կառավարել:

- 3) նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
- 4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
- 5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
- 6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
- 7) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
- 8) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,
- 9) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
- 10) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- 11) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- 12) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
- 13) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- 14) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Պետրովկա համայնքում զբոսաշրջության զարգացումը խթանել:
- 15) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- 16) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- 17) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
- 18) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
- 19) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
- 20) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 1

Պետրովկա համայնքում կիրականացվի «Գազաֆիկացման» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակների գազով ապահովելը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Կառուցել գազաֆիկացման ներքին ցանց

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել 1,5 կմ երկարությամբ համար խողովակներ, ցեմենտ:

1.2. հենասյուների փոսերի փորում:

2-րդ միջանկյալ գործողություններ.

2.1. Ձեռք բերել էլեկտրոդ և կարբիթ:

2.2. Խողովակները միացնել:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Պետրովկա համայնքի բոլոր 286 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն հայ Ռուս գազատարից վերցնելու թույլտվություն: Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծը և բյուջեն: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բնական գազով: Ծրագրի իրականացման համար Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 3մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 12մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 15մլն դրամ

ԾՐԱԳԻՐ 2

Պետրոպկա համայնքում կոմունալ տնտեսության աշխատանքները կազմակերպելու ևնպատակով կիրականացվի «Որակյալ խմելու ջրով ապահովում և ջրմուղ-կոյուղու կառուցում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով և կոյուղով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ, կառուցված երկրորդ ջրագիծ և կանոնակարգված ջրի բաշխում

2.Կառուցված ջրմուղ-կոյուղի

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել խողովակներ 7կմ-ի համար, էլեկտրոդ և 230 հատ փականով բաժանարարներ:

1.2.Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:

1.3. Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:

1.4.Երկրորդ ջրագծի խողովակաշարն անցկացնել՝ միացնելով գործող ջրագծի ներքին ցանցին:

1.5. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդկենտրոնի օգնությամբ:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Ձեռք բերել ագրոխողովակներ 2կմ-ի համար, ջրհորի մետաղյա կափարիչներ, ցեմենտ և փականներ ջրմուղ կոյուղու համար:

2.2. Խողովակները միացնել:

2.3. Համայնքաբնակներին աջակցել, որպեսզի բնակարաններից միացումներ տան դեպի կոյուղագիծ:

2.4 Կազմակերպել աղբահանություն:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Պետրոպկա համայնքի բոլոր 286 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային

ներդրումներ: Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում, բնակչության 10%-ը ջուր չունեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով: Համայնքը չունի ջրմուղ-կոյուղի և շահառուներն օգտվում են դրսի սան-հանգույցներից: Ծրագրի իրականացմամբ համայնքի բոլոր 286 շահառուները կօգտվեն ջրմուղ կոյուղուց: Համայնքում առկա զանազան հիվանդությունների վտանգը կվերանա, կոմունալ տնտեսությունը կզարգանա:

2.2 Կազմակերպել աղբահանություն:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Պետրովկա համայնքի բոլոր 286 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն որակյալ խմելու ջրով Ծրագրի իրականացման համար

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 2մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 24մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 26մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

Պետրովկա համայնքում հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանման և շահագործման նպատակով կիրականացվի «**Ճանապարհների բարեկարգում**» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.3. Կատարել դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում:

1.4. Հեղեղատարներ կառուցել:

1.5. Ներհամայնքային ճանապարհների լուսավորություն անցկացնել:

1.6. Կատարել ճանապարհների կահավորում:

1.7. Երկու կանգառի կառուցում:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի հասարակական տրանսպորտի երթուղային տաքսիներն ավելացվեն գոնե մեկով:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Պետրովկա համայնքի բոլոր 286 բնակիչները : Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, մրցույթ հայտարարել ճանապարհաշինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Ստանալ համապատասխան գումարը, փոխանցել գումարն ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Մարզպետարանի տրանսպորտի բաժնի հետ քննարկել, որպեսզի հասարակական տրանսպորտի երթուղային տաքսիներն ավելացվեն գոնե մեկով: Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են բավարար վիճակում, կահավորված չեն և բացակայում է փողոցային լուսավորությունը: Համայնքի 25 %-ը չի կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթնեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի: Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 2 մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 5 մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 7 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

Պետրովկա համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի զարգացման նպատակով կիրականացվի «**Մարզադահլիճի կահավորումն գործարկում**» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակների մարզական կյանքի ակտիվացման ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Կահավորված և ջեռուցվող մարզադահլիճ

2. Մարզագույքով ապահովված մարզադահլիճ

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել մարզադահլիճի կահավորման համար անհրաժեշտ գույք:

1.2. Կահավորել մարզադահլիճը:

1.3. Ձեռուցման համակարգ ձեռք բերել:

1.4. Ձեռուցման համակարգը տեղադրել:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Ձեռք բերել տարբեր մարզաձևերի համար նախատեսված մարզագույք և տրինաժյորներ մարզադահլիճի համար:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Պետրովկա համայնքի բոլոր 286 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2019թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Այժմ համայնքի 40 երիտասարդ զուրկ է մարզվելու հնարավորությունից: Ծրագրի իրականացումից հետո համայնքի երիտասարդները կմասնակցեն մարզային, հանրապետական և միջազգային սպորտային մրցումներին և կզբաղվեն առողջ ապրելակերպով: Հետագայում համայնքը կունենա մարզադպրոց:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 1մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 4մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 5մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ

3. ՀՁԾ ֆինանսավորում

ՀՁԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել

4. ՀՀԶԾ-ի մոնիթորինգը - իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը: Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագրի նկատմամբ իրականացված մոնիտորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների: